«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ	«Մարտունի» մասնաճյուղի ղեկավար
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ	Լրիվ աշխատաժամանակ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Անորոշ ժամկետով
ՎԱՅՐԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Մարտունի» մասնաճյուղի ղեկավարի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են պոտենցիալ վարկառուներ գտնելու աշխատանքների համակարգում, վարկերի տրամադրում, տրամադրված վարկերի վերադարձելիության ապահովում: Մասնաճյուղի աշխատողների կողմից տրամադրվող ծառայությունների որակի վերահսկողություն և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ընկերության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,
- հաճախորդների ներգրավում,
- աշխատողների աշխատանքի վերահսկողություն,
- մասնաճյուղի գործառնությունների կառավարում և վերահսկում,
- հաճախորդների կողմից բարձրացրած հարցադրումների և բողոքների կառավորում և լուծում,
- անհրաժեշտության դեպքում հաճախորդների սպասարկման գործընթացին մասնակցում,
- վարկառուների վարկունակության գնահատում,
- անհրաժեշտ վերլուծությունների իրականացում,
- ներկայացված վարկային փաթեթների ստուգում և հաստատում,
- տրամադրված վարկերի նկատմամբ հսկողության իրականացում,
- ամսական և եռամսյակային հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթություն (տնտեսագիտական, ֆինանսական կամ բանկային),
- ֆինանսական ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ,
- պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- վերլուծելու ունակություն,
- կազմակերպչական և ղեկավարման հմտություններ,
- հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություններ,
- թիմային աշխատանքի հմտություններ,
- բիզնես-էթիկայի կանոնների իմացություն և դրանց հետևում,
- լարված իրավիճակում լուծումներ գտնելու ունակություն:

ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Աշխատանքը ենթադրում է աշխատաժամանակի մինչև 60%-ը գրասենյակից դուրս անցկացնելու պատրաստակամություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Մարտունի 1401, Մյասնիկյան 47 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ HR@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ՝ 16 նոյեմբերի 2026
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 30 նոյեմբերի 2026